

Է Ծ Ն Ե Ա Յ Ե Ր

ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ

ՔԱՐԱՌ

ԱՍՍԵՍԵԱԼ Ի ՓԻՍՈՒՄՆ ԱՍԵՆՈՐԼՆԵԱԼ ՍԲ. ԱՍԱՄԼԻՆ

Այս խոսադրին ասի Ս. Արտուրյա Թ. 265 մագաղաթեայ Ձևագրին մեջ ունիմք հետևեալ Գանձը, որ հարազատ կը թուի, դասելով Ս. Գր. Նարեկացիի ժամօր երեք Գանձերուն հետ ունեցած թագմաթիւ նմանութիւններէն:

Ձևագիրս ունի կարեւոր յիշատակարան մըն ալ զոր առագրելով կը ներկայացնենք հոս:

Փառք ամենասուրբ երրորդութեան յաւիտեանս յաւիտենից ամէն:

Ի թուականիս Հայոց 247 [= 1314] ի թագաւորութեան Հայոց Օշնի եւ ի կաթողիկոսութեան կոստանդեայի հղեւ կատարումն գրեցաւ Յերեսս անգեալ աղայեմ, որք հանդիպիք սուրբ գրոցս՝ յիշեցէք ի բարին զարժանին յիշման զտամ Այիծն զսինջլալէան կիպրայի որ է դուստր Պաւարոն Հնթմոյ որ էր տէր Համպրուներն որոյ աղորմացի նմա Տէր ԱՅ ամէն: Եւ վերոյ գրեալ սինջլալէան էր Հայոց թագաւորին վերոյ գրելոյն մօրքոյր, որ հրամայեաց ինձ մեղաւոր եւ անարժան գրչիս՝ այս:

հրէշային եղեանագործութիւնները անշուշտ մարտեց խորունկ յագումով: 1853ին Համայնագրութեան խորտելալը, Կոստանդնուքէր գոյութիւն: Բայց անկէ֊Փրանզ նաւատորմն ու բանակներն էին որ աղբլււակիան ժողովուրդին մայրաքաղաքը — Պոլիսը — պաշտպանելու համար, անցան Սեւ ծովը եւ դարեցին Սեաստաբուլը: Օ, մեռելներ, մեռելներ, չէք կրնար փախչալ ու չփաթթուիլ ձեր արիւնէն ձեր իսկ զահեմներու կոկորդիս: Սեւ մարգարէն որքան նորոյթ է ինկած կը թուի, նման թշուառութիւններ որդարու եւ նման մարդկութեան մը յետախաղաղ ջնջումը գուսեալ:

Թ. ՕՇԱԿԱՆ

(Շարունակելի՝ 3)

պիսի յեղանակաւ շարայարել զերգս Սաղմոսաց եւ զայլս ըստ կարգի, որոյ Տէր ԱՅ վայելել տացէ զսա վերոյ գրեալ տաացողին ընդ երկայն աւուրս: Եւ յետ աստեացս զանանց բարիսն եւ զանճառելի հրանուծութիւն ուր սուրբք ամենայն հաւաքեալ կան: Եւ որք յիշէք զվերոյ գրեալ տամ Այիծն ձեռդիւք իւրովք եւ ամենայն զարմիւք, եւ դուք յիշալ քիցիք յողորմութիւն ԱՅ, որ է օրհնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Գրեցաւ յընտիր օրինակէ արեւ կատարեալ յարուեստ գրչութեան ի կիպրոս կղզի ի քաղաք Մաղուսայ ի վանքս Հայոց ընդ հովանեաւ սր. ԱՅածնիս եւ սրբոյ Յոհն. աւետարանչի, ձեռամբ մեղաւոր հողոյ եւ անարժանի, Սեփանուսի Գոյնեւրիցանց(*), որոյ ողորմեցի Պս. ԱՅ ամէն:

Գանձ անապական ծածկեալ սրբութեամբ, գերահրաշ եւ անարատ զարդարեալ ժաքութեամբ, սրբուհի եւ միշտ կոյս օր. ԱՅածին Մարիամ, տաճար տիրակիր խորան ԱՅարեակ երկնակառոյց եւ լուսաւարդ, յորում հանցեալ փառաբանիչ սր. երրորդութիւնն, զովասանական ներքողիւք զեռարաշ սրբասացութիւնան անլուելի ձայնիւ երգել քեզ ամէնօրհնեալ ի կանայս. ահա ընկալցիս զաղերսս եւ զպաղատանքս մեր մատուցանել որդւոյ քոյ եւ Այգ. մերոյ, աղայեմք:

Բախճան ցանկալի ընդունակ զգվեստի մեծարեալ սրբութեամբ, զոր տէրն տեւանց նայեցեալ ի բարձանց յօրինեաց տեղի հանգստարանի, որ ի ձեռն ԱՅախնաւ գթութեանցը նորոգեաց ըզքզ դարաստան փոխանակ ԱՅատունկի գրախտին Աղենայ. ծառն կենաց եւ անմահութեան ի միջի քում տնկեալ, ունեւով ի քեզ զպառուղին կենդանութեան որով նորոգեցան տիեզերք ամենայն. վերս գրեալ սրբութեամբ եւ արդարութեամբ ամէնօրհնեալ ի կանայս. . .

Ի քեզ կատարեցան տաք ԱՅախսս եւ ընտրեալ նախագուշակ մարգարէիցն, որ փոխանակ Եւայի զոլ ըզքզ ժայր կենդանւոյ բանին Այ. որով նորոգեցան ա-

(*) Գրչին անունը անապին մէջ գիծակէտ ծածկաբով է հասկնալով:

բարածք յառաջին հնութենէ մեղաց, ուստի նախամօրն անիծից երկունք յօրհնութիւնըս փոխարկեցան. զիր դատապարտութեան յանցանցըն պատառեցաւ. քե ճոխանայ նախահայրն Ադամ դստերդք եւ կուսիւրդ ծնանելով ի քէն զբարձօղըն մեղաց. պարէ եւ եւս զստիւրօք իւրօք ուրախութեամբ զարդարեալ, պարակից եղեալ հրեշտակաց ի ձեռքն քո մայր եւ կոյս ամէնօրհնեալդ ի կանայս. . . .

Գովեալ միշտ եւ երկըրպագեալ սրբուհի անարատ, ապաւնէ փրկութեան նորոգման աշխարհի, օրինակեալ զքեզ նահապետին Նոյի տապանակ կենդանի, տախտակ փրկութեան մածեալ սրբութեամբ, յորում արուեստաւոր սբ. Հոգին եկաւորէ ի քեզ աւետեօքըն հրեշտակապետին, սբ. ողջունիւն ի քեզ մածուցեալ բեւեռապինդ Ածաղամ հեղուսիւք, միաւորեաց զքեզ ընդ բանին Այ. անանջըրպետ բաժանմամբ ի ծովու աշխարհի, անախկոծ նաւարկութեամբ ժամանեալ թեօք միածնիդ որ ի քեզ կանգուցեալ արմնով, բարձրացոյց զլքեզ ի կառքս քերովբէական առ հայր եւ որդի եւ սբ. Հոգին, ամէնօրհնեալդ ի կանայս. . . .

Ով տիրուհի անարատուհի եւ միշտ կոյս, որ եղբր տապանակ սրբութեան բանին Այ. ունելով ի քեզ կենդանագիր կտակ օրինացն գրեալ մատամբ էին Այ. սափոր ոսկի զամանայն քաղցրութեան ի քեզ կրիւով, գաւազան ծաղկեալ յարմատոյն Յեսեայ, բերելով պտուղ արքայական, բուրուառ բարձեալ երկք ունելեօք, հոգւով՝ մտօք եւ մարմնով միացեալ, խուսիկ անուշութեան կազմեալ օրով լցան ամենայն տիեզերք, խորան կանգնեալ Յի. եւ ամպ հովանի ի լոյս գիշերի, տեղի դատաստանի նոր Իլի, որ ի քեզ եւ ընդ քեզ եւ զկնի քո հետեւելոցս լիցիս պահապան ի ձեռքն հայցմամբ մաղթանաց, միաւորեալ զմեզ ի մի հոտ քո ընդ սրտց առաքելոցն որ այսօր խողովեցան յանփոփումըն տիրամօրդ եւ Ածածնիդ, զոր եւ մեք հայցեմք պարգեւել մեզ ըզտուրըս բարեաց սրբութեան եւ արգարութեան ամէնօրհնեալդ ի կանայս. . . .

Բարուն իմաստից լոյս գերազանց արեգական արգարութեան արեւելք, առաւօտ խաղաղութեան լուսին լըբեցալ, արուս-

եալ պայծառ ի կամարըս սրբութեան, լեռուն վիմաժին ըստ տեսեան մեծին Դանիէլի, ցօղ ի Հերմոնէ իջեալ ի Սիոն, գեղմն քաղցրութեան զօր ետես Գեդէոն, դուռն փակեալ եւ արբիւր կնքեալ, կնք ժրագլուխ պսակ պարծանաց, պարակից սերովբէից եւ հանգիստ բազմաշնայ քեւորբէից ամէնօրհնեալդ ի կանայս. . . .

Ի քեզ ապաւինիմք ամենասուրբ Ածածին, բարեխօսեա անդապար հաստատել սբ. զեկեղեցի, պահել անարատ մինչեւ յապագայի աւուրըն մեծի, զհովուապետըն խաշանց քոց բանաւորաց զհայրապետն մեր զվարդապետըս զօրացուցեա ուղղափառութեամբ ուսուցանել զգաւանեալս ի քեզ հանդերձ զպրօք եւ սարկաւագօք. ըզգասս քահանայութեամբ բաշխամք սբ. մարմնիդ եւ արեան միածնիդ քոյ արժանաւորեալ, եւ զամենայն հաւատացեալքս ի քեզ նորդեա հաւատով յուսով եւ սիրով ամէնօրհնեալդ ի կանայս. . . .

Եւ եւս առաւել զյորդորումըն սիրոյ. . . . Բոտել ըզմարմնըս մեր խնկանւելի մաղթանօք ի յիշատակ տիրամօրդ եւ Ածածնիդ զանձնըն մեր.

Գովեմք ըզքեզ տիրուհի անարատ մայր Տեառն եւ կոյս Մարիամ, պարկեշտակորն պարգեւ հաւատոյ, ի բարձրելոյ հօրէ զօրացեալ եւ ի սրբոյ Հոգւոյն հովանաւորեալ, բնութեամբ որդւոյ զարդարեալ եւ տաղանթեալ, Հօր միածնի եւ քեզ անկրանիկ, որ ի քէն ծնեալ եւ Տէր աւարչութեան, տունկ կենաց եւ պտուղ օրհնութեան, խոստովանելով ըզքեզ մայր կենդանոյ բանին Այ. ի քէն հայցեմք բարեխօսեա անգաղարք առ օրդիդ քո եւ Ածմեր, հանդերձ մեծին ի ծնունդոյ կանանց Կարապետին եւ Մկրիւն Յովհաննու, նախավկայ չարչարանաց միածնիդ յառաջարկաւազին սրբոյն Ստեփանոս, պաղատանօք թագաւորելոց օծմամբ առ հաղելոցըն սրազգեստից, եւ որ մերն է Հուսաւորիչ հանդերձ միանձամբք ճշգնաւորօք, զի դու ես օրհնեալ եւ բարեբանեալ եւ քեզ երանեն ամենայն զինդ ուրորութիւնք հրեշտակաց ամէնօրհնեալդ ի կանայս. եւ այժմ ողորմեա. . . .

Հրատ. Ն. Վ. ԾՈՎԱԿԱՆ